5.	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ LAW ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Հ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր

Հասարակության և պետության կենսագործունեության բոլոր ոլորտները խարսխված են որոշակի սկզբունքների վրա:

«Սկզբունք» նշանակում է որևէ երևույթի, գործընթացի կամ համակարգի հիմնարար դրույթ, ելակետային գաղափար: Հանրագիտարանային բնորոշմամբ՝ սկզբունքը որևէ տեսության, ուսմունքի, գիտության, աշխարհայացքի, առհասարակ ամեն մի գործունեության, վարքի, քաղաքականության, կուսակցական ղեկավարման և այլնի ելակետային դրույթն է[1]: Տրամաբանական առումով սկզբունքը համակարգի կենտրոնական հասկացությունն է, հիմունքը, որը որևէ դրույթի ընդհանրացումն ու տարածումն է այն բնագավառի բոլոր երևույթների վրա, որից տվյալ սկզբունքը վերացարկված է[2]:

Ըստ բնույթի՝ տարբերվում են սոցիալական, տնտեսական, քաղաքական, գաղափարական, բարոյական, կրոնական, ինչպես նաև իրավական սկզբունքներ: Պետության իրավական համակարգը կառուցված է հիմնարար սկզբունքների վրա: Իրավունքի ընդհանուր սկզբունքները ձևավորվել են հասարակության, պետության և իրավունքի պատմական էվոլյուցիայի ընթացքում: Դրանք ձևակերպվել են գիտական ուսումնասիրություններում, արտացոլվել օրենսդրության մեջ՝ ամրագրվելով նորմատիվ իրավական ակտերում: Օրինակ՝ Հայաստանի

[1] Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Հ. 10, Երևան, 1984, էջ 440:

[2] Տե՛ս Փիլիսոփայական բառարան, Մ. Մ. Ռոզենտալի խմբագրությամբ, «Հայաստան», Երևան, 1975, էջ 377:

Հանրապետության Սահմանադրության առաջին գլխում ամրագրված են սահմանադրական կարգի հիմունքները, որոնք իրենց էությամբ հասարակության ու պետության գործունեության կարևոր սկզբունքները բովանդակող հիմնարար դրույթներ են, այն է՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, ժողովրդաիշխանության, մարդու՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման, իշխանությունների բաժանման և հավասարակշռման, օրինականության, ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի, գաղափարախոսական բազմակարծության, տեղական ինքնակառավարման, սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանության, տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության, սոցիալական արդարության և մյուս սկզբունքները: ՀՀ Սահմանադրության երկրորդ գլուխն ամրագրում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները և ըստ այդմ՝ նախատեսում մարդու արժանապատվության անխախտելիության, կյանքի իրավունքի բացարձակ բնույթի, մահապատժի անթույլատրելիության, անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, օրենքի առջև բոլորի հավասարության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, խտրականության արգելքի, օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի և այլ սկզբունքներ[1]: Նշված սկզբունքները և ՀՀ Սահմանադրության՝ որպես պոզիտիվ իրավունքի հիմնական աղբյուրի մյուս գլուխներում նախատեսված բազմաթիվ այլ հիմնադրույթներ այս կամ այն կերպ իրենց արտացոլումն են գտնում ճյուղային իրավական ակտերում:

Իրավունքի սկզբունքները՝ որպես հիմնարար գաղափարներ, բնութագրում են իրավունքի բովանդակությունը, էությունը և հասարակության մեջ ունեցած նշանակությունը: Սկզբունքները՝ որպես հիմնարար դրույթներ, արտահայտում են իրավունքի ընդհանուր օրինաչափությունները, ինչպես նաև դրսևորվում են որպես որոշակի նորմեր, որոնք գործում են իրավական կարգավորման տարբեր ոլորտներում և տարածվում են իրավահարաբերությունների սուբյեկտների վրա[2]: Մասնագիտական գրականության մեջ առկա են բազմաթիվ

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015թ. փոփոխություններով, Երևան, 2016:

[2] Տե՛ս Леушин В. И. Принципы права // Теория государства и права, Под ред. В. М. Корельского и В. Д. Перевалова, М., 1998, էջ 237:

հետազոտություններ իրավունքի սկզբունքների վերաբերյալ: Համամիտ ենք Ն. Ա. Բելյաևի այն կարծիքին, որ ‹‹Իրավունքի սկզբունքները իրավունքի բովանդակության և նպատակների էության, իրավունքի համակարգի կառուցման և նրա գործնական իրականացման կարգի վերաբերյալ հիմնարար, ղեկավար գաղափարներ են››[1]: Ըստ Ա. Ա. Գորդիենկոյի՝ սկզբունքները «իրավունքի ընդհանրացված նորմեր են, օրենքում խտացված ձևով արտահայտված որակական հատկանիշներ, հիմնական տեսական դրույթներ»[2]: Գտնում ենք, որ իրավունքի ընդհանուր սկզբունքները միայն տեսական դրույթներ չեն: Դրանք ունեն նորմատիվ բովանդակություն և գործնական նշանակություն, ծառայում են որպես իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահ պրակտիկայի հուսալի կողմնորոշիչներ: Կ. Ա. Ուրժիցկին իրավացիորեն նշում է, որ իրավունքի սկզբունքները իրավաբանական նորմերում ուղղակի ամրագրված կամ նորմերի մեկնաբանման ճանապարհով ձևակերպված և նրանց կողմից զարգացող ղեկավար դրույթներ են, ելակետային գաղափարներ, որոնք արտացոլում են համապատասխան ոլորտի միասեռ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման օրինաչափությունները[3]: Իրավաբանական գրականության մեջ գերիշխող է այն դիրքորոշումը, որ իրավունքի սկզբունքներն իրավական նորմերում արտահայտվող գաղափարներ են, որոնք օժտվելով նորմատիվ բնույթով, իրավակիրառ պրակտիկայում հանդես են գալիս որպես համապարտադիր պահանջներ: Ուստի, «իրավունքի սկզբունք» հասկացությունը կարող ենք սահմանել «գաղափար» կատեգորիայի միջոցով, որը, ստանալով նորմատիվ ամրագրում, ձեռք է բերում պարտադիր նորմ-սկզբունքի բնույթ: Ա. Մ. Վասիլևը կարծում է, որ իրավական գաղափար – սկզբունքները համընդհանուր նշանակություն են ստանում հետագայում օրենսդրության մեջ՝ իրավական նորմերի համակարգում[4]: Գաղափարն իրավունքի ընդհանուր սկզբունքի վերաճելու համար պետք է անցնի զարգացման

---

[1] Տե՛ս Беляев Н. А. Уголовно-правовая политика и пути ее реализации, Л.: Изд-во Ленинградского ун-та, 1986, էջ 33:

[2] Տե՛ս Гордиенко А. А. Сущность советского права и его роль в социалистическом обществе, Ташкент, 1967, էջ 50:

[3] Տե՛ս Уржицкий К. А. К вопросу о принципах правового регулирования общественных отношений // Правоведение, 1968, N 3, էջ 124:

[4] Տե՛ս Васильев А. М. Правовые категории, М.: Юрид. лит., 1976, էջ 221:

որոշակի փուլեր՝ ձևակերպումից և գիտական հիմնավորումից մինչև նորմատիվ ամրագրում օրենսդրական ակտերում:

Իրավունքի սկզբունքները անցողիկ բնույթ ունեցող, կամային ձևակերպված դրույթներ չեն, այլ հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական կարգով պայմանավորված հիմնարար գաղափարներ, ելակետային մոտեցումներ: Լ. Ս. Յավիչը գրում է. «Իրավունքի սկզբունքներն այնպիսի ելակետեր են, իրավունքի կեցության այնպիսի մեկնարկային գաղափարներ, որոնք արտահայտում են տվյալ հասարակական–տնտեսական ֆորմացիայի կարևորագույն օրինաչափություններն ու հիմքերը, իրավունքի էությանը համազոր երևույթ են և կազմում են նրա հիմնական բովանդակությունը, օժտված են համընդհանրությամբ (ունիվերսալությամբ), համապարտադիր-հրամայական (իմպերատիվ) բնույթով և ընդհանուր նշանակությամբ»[1] :

Իրավունքի սկզբունքը բնութագրվում է որպես իրավական գիտակցության կատեգորիա, որը մարմնավորվում է իրավական նորմերի համակարգում[2]: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ իրավաբանական գրականության մեջ կա միասնական դիրքորոշում իրավունքի սկզբունքների՝ որպես հիմնարար բնույթ ու ելակետային նշանակություն ունեցող գաղափարների մասին: Սակայն նկատվում են տարբեր մոտեցումներ իրավունքի սկզբունքների դասակարգման հարցում: Հանդիպում ենք իրավունքի սկզբունքների դասակարգման ըստ հասարակական-տնտեսական ֆորմացիայի՝ ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական, սոցիալիստական, ինչպես նաև իրավունքի անցումային տիպին բնորոշ սկզբունքներ[3]: Համամիտ ենք, որ իրավունքի յուրաքանչյուր պատմական տիպի համապատասխանում են որոշակի սկզբունքներ: Միաժամանակ այն կարծիքին ենք, որ իրավունքի արդի ըմբռնումների համատեքստում առավել մեծ գիտագործնական նշանակություն ունեն իրավունքի սկզբունքների էության ու բովանդակության բացահայտումն ու դրանց դասակարգումը ոչ թե ֆորմացիոն, այլ քաղաքակրթական չափանիշներով: Արդիական ենք

---

[1] Տե՛ս Явич Л. С. Право развитого социалистического общества (сущность и принципы), М.: Юрид. лит., 1978, էջ 11:

[2] Տե՛ս Лукашева Е. А. Принципы социалистического права // Советское государство и право, 1976, N 6, էջ 23-24:

[3] Տե՛ս Теория государства и права, Под ред. М. Н. Марченко, М., 2001, էջ 296:

համարում մի կողմից իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետությանը բնորոշ իրավունքի սկզբունքների, իսկ մյուս կողմից՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների կարևորումը, դրանց համադրումն ու նրդաշնակումը, համակողմանի ուսումնասիրումն ու պատշաճ կիրառումը:

Գիտական վեճի առարկա է մնում այն հարցը, թե իրավունքի սկզբունքներն օբյեկտի՞վ, թե՞ սուբյեկտիվ կատեգորիաներ են: Մենք կարծում ենք, որ սկզբունքները բովանդակում են և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ հատկանիշներ: Սկզբունքների օբյեկտիվ հատկանիշների առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանին և հասարակական կացութաձևին բնորոշ են ուրույն իրավական սկզբունքներ, որոնք փոխադարձաբար կապված են միմյանց, և դրանցից մեկի բացառումը հանգեցնում է ողջ իրավական համակարգի գործունեության խաթարմանը: Իսկ սուբյեկտիվությունը դրսևորվում է այն սկզբունքների ընտրության հնարավորության մեջ, որոնք օրենսդրի կողմից դրվում են այս կամ այն իրավական ինստիտուտների և ամբողջությամբ վերցրած՝ իրավական համակարգի հիմքում[1]:

Իրավունքի սկզբունքները մի կողմից արտացոլում են իրավունքի օբյեկտիվ հատկությունները, իսկ մյուս կողմից, սկզբունքներում դրսևորվում են հասարակության անդամների կողմից իրավունքի սուբյեկտիվ ընկալումը, նրանց բարոյական և իրավական հայացքները, գաղափարները, զգացմունքները, պահանջները, որոնք դրսևորվում են իրավաըմբռնման ուսմունքներում, տեսություններում, գիտական ուղղություններում, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում:

Տարբեր աշխատություններում սկզբունքները շարադրվում են տարբեր հաջորդականությամբ, օրինակ՝ Ս. Ս. Ալեքսեևն առանձնացնում է օրինականության, իրավական հավասարության, սոցիալական արդարության, քաղաքացիական պարտքի, օբյեկտիվ ճշմարտության, մեղքի համար պատասխանատվության սկզբունքները[2]:

Վ. Ի. Լեուշինը թվարկում է իրավունքի հետևյալ սկզբունքները՝ արդարության, մարդու իրավունքների հարգման, իրավահավասարության, օրինականության, արդարադատության, մեղքի համար

---

[1] Տե՛ս Калеина С. Г., Кудрявцев В. Н., Принципы советского уголовного права, М., Наука, 1988, էջ 17:

[2] Տե՛ս Алексеев С. С. Проблемы теории права, Свердловск, 1972, Т. 1, էջ 108-109:

պատասխանատվության, իրավունքների և պարտականությունների անխզելի կապի[1]:

Օ. Ի. Ցիբուլևսկայան նշում է իրավունքի հետևյալ սկզբունքները. սոցիալական արդարություն, քաղաքացիների իրավահավասարություն, իրավունքների և պարտականությունների միասնություն, մարդասիրություն, իրավունքում համոզման և հարկադրանքի զուգորդում, մարդասիրություն[2]:

Կարևոր ենք համարում նշված բոլոր սկզբունքները, որոնց մի մասը բովանդակային առումով նույնանման են, սակայն ունեն ձևակերպման տարբերություններ, և առավել կարևորում ենք դրանց կենսագործման պայմանների ու կառուցակարգերի ապահովումը: Օրենսդրական ակտերում ևս սկզբունքներն ամրագրվում են որոշակի հաջորդականությամբ, սակայն դա չի նշանակում, որ դրանցից մեկն առավել կարևոր է, քան մյուսները: Բոլոր սկզբունքներն էլ անհրաժեշտ են, հիմնավորված ու կարևոր և համատեղ կազմում են իրավունքի ընդհանուր համակարգի կամ տվյալ իրավունքի ճյուղի կամ որոշակի իրավական ինստիտուտի հիմքը: Մասնավորապես ՀՀ քրեական օրենսգիրքը 4-րդ հոդվածում սահմանում է քրեական օրենսդրության սկզբունքները՝ հետևյալ հաջորդականությամբ. ‹‹Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է օրինականության, օրենքի առջև հավասարության, պատասխանատվության անխուսափելիության, անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության, արդարության և պատասխանատվության անհատականացման ու մարդասիրության սկզբունքների վրա››[3]: Կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ գլխում՝ 7-ից 25-րդ հոդվածներում, նախատեսված են քրեական դատավարության հետևյալ սկզբունքները՝ օրինականությունը, հավասարությունը օրենքի և դատարանի առջև, անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը, իրավաբանական օգնության իրավունքի ապահովումը, անձի անձեռնմխելիությունը, բնակարանի

---

[1] Տե՛ս Леушин В. И. Принципы права // Теория государства и права, Под ред. В. М. Корельского, В.Д. Перевалова, М., 1998, էջ 239-240:

[2] Տե՛ս Цыбулевская О. И. Принципы права // Теория государства и права: курс лекции, Под ред. Н. И. Матузова, А. В. Малько, М.: Юристь, 1997, էջ 149-154:

[3] Տե՛ս www.arlis.am:

անձեռնմխելիությունը, գույքի անձեռնմխելիությունը, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը, քրեական դատավարության լեզուն, դատական քննության հրապարակայնությունը, գործի արդարացի քննությունը, անմեղության կանխավարկածը, կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը, ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը, կրկին դատվելու անթույլատրելիությունը, դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնումը, մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում, արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից, ապացույցների ազատ գնահատումը[1]:

Քաղաքացիական օրենսդրության սկզբունքները ներկայացված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ ‹‹Քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա››[2]: Իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ գլխում՝ 11-ից 17-րդ հոդվածներում, նախատեսված են քաղաքացիական դատավարության հետևյալ սկզբունքները՝ հավասարությունը օրենքի և դատարանի առջև, տնօրինչականությունը, մրցակցությունը, դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը, գործերի քննության բանավորությունը, դատավարության լեզուն, դատական վարույթի հրապարակայնությունը[3]:

Այսինքն, յուրաքանչյուր նորմատիվ իրավական ակտ, իր կարգավորման առարկայի և մեթոդների առանձնահատկություններին համապատասխան, սահմանում է իրեն բնորոշ սկզբունքների

---

[1] Նույն տեղում:

[2] Տե՛ս www.arlis.am:

[3] Նույն տեղում:

համակցությունը: Իրավունքի բոլոր ճյուղերը ելնում են ընդհանուր սկզբունքներից՝ այն է. օրինականություն, ժողովրդավարություն, իրավահավասարություն, արդարություն, մարդասիրություն, մարդու իրավունքների և ազատությունների հարգում ու պաշտպանություն և այլն, այնուհետև հենվում են ճյուղային և հատուկ սկզբունքների վրա, որոնք վերաբերում են միայն այդ իրավունքի ճյուղին կամ հարակից ճյուղերին (միջճյուղային սկզբունքներ): Յուրաքանչյուր իրավունքի ճյուղում իրավունքի ընդհանուր սկզբունքները ստանում են ուրույն դրսևորում, արտահայտվում տվյալ ճյուղին բնորոշ ձևով և բովանդակությամբ, կյանքի կոչվում որոշակի կառուցակարգերով:

Իրավաբանական գրականության մեջ չենք նկատել կարծիքների միասնություն իրավունքի սկզբունքների թե՛ քանակական և թե՛ որակական բնութագրին վերաբերող հարցերում: Կարծում ենք, որ իրավունքի սկզբունքների որևէ քանակական բնութագիր վերջնական լինել չի կարող, քանի որ իրավունքը և նրա սկզբունքները մշտապես փոփոխվող ու զարգացող կատեգորիաներ են: Ինչ վերաբերում է սկզբունքների որակական դասակարգմանը, ապա ընդունելի ենք համարում դրանց տարանջատումը ընդհանուր, միջճյուղային, ճյուղային և հատուկ սկզբունքների: Գտնում ենք, որ վերոհիշյալ սկզբունքները փոխկապված են, բխում են մեկը մյուսից և լրացնում են միմյանց:

Ընդհանուր սկզբունքները բնութագրում են իրավունքի ներքին օրինաչափությունները, բացահայտում նրա բնույթն ու նշանակությունը, արտացոլում իրավունքի համակարգի խորքային կապերը, ինչպես նաև կանխորոշում զարգացման միտումները: Իրավունքի ընդհանուր սկզբունքները հենվում են բարոյականության նորմերի ու արժեքների վրա: Ընդհանուր սկզբունքներից բխում են ավելի կոնկրետ, իրավունքի այս կամ այն ճյուղին (ճյուղային սկզբունքներ) կամ որոշակի ինստիտուտին (հատուկ սկզբունքներ) վերաբերող հիմնադրույթները: Անհրաժեշտ ենք համարում առանձնացնել նաև միջճյուղային սկզբունքները, որոնք բնորոշ են իրավունքի հարակից ճյուղերի, օրինակ՝ միջճյուղային է դատավարության լեզվի սկզբունքը, որը բնորոշ է և՛ քաղաքացիական դատավարության իրավունքին, և՛ քրեական դատավարության իրավունքին:

Համամիտ ենք Վ. Ն. Սինյուկովի հետ այն հարցում, որ «Իրավունքը՝ որպես ազգային և համաշխարհային մշակույթի երևույթ,

իրեն բնորոշ նորմատիվ ձևով ի մի է բերում ժողովրդի հոգևոր արժեքներն ու համամարդկային նվաճումները՝ մարդու իրավունքները, ժողովրդավարությունը, հասարակության բարոյական հիմքերը, սոցիալական արդարությունը»[1]: Հավելենք, որ իրավունքի սկզբունքները պետական իշխանության մարմինների իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահ գործունեության հիմնական ուղենիշներն են: Սկզբունքների պահպանման աստիճանով է պայմանավորված ողջ իրավական համակարգի հստակության, կայունության և արդյունավետության մակարդակը:

Իրավունքի ընդհանուր սկզբունքները ոչ միայն ապահովում են իրավունքի համակարգային ամբողջականության հիմքերը, այլև մարդկանց գիտակցության և վարքագծի վրա ունենում են զգալի կարգավորիչ, տեղեկատվական, կողմնորոշիչ, պահպանիչ, պաշտպանիչ, կանխիչ ազդեցություն[2]:

Այսպիսով, իրավունքը կարևոր հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորիչ է, որը ծառայում է իր նպատակին այն դեպքում, երբ հիմնվում է ընդհանուր սկզբունքների համակցության վրա:

Բանալի բառեր՝ *իրավունքի սկզբունք, հիմնարար դրույթ, ելակետային գաղափար, իրավունքի ընդհանուր, միջճյուղային, ճյուղային և հատուկ սկզբունքներ, օրինականություն, ժողովրդավարություն, մարդասիրություն, արդարություն, իրավահավասարություն:*

THE PRINCIPLES OF LAW AS FUNDAMENTAL IDEAS

H. H. HAKOBYAN
Doctor of Law, Associate Professor
R. KH. HAKOBYAN
Doctor of Law, Associate Professor
Rector of Gavar State University

---

[1] Տե՛ս Мироненко М. Б., Принципы юридической ответственности, Тольятти, 2001, էջ 190-198:

[2] Տե՛ս Общая теория государства и права, Т. 2, Под ред. М. Н. Марченко, М., 2002, էջ 77:

The article is devoted to the principles of law. It is noted that the principles of law are fundamental, key ideas characterizing the content, essence of law and its importance in society. The principles of law are presented as the main guidelines for lawmaking, law application and enforcement activity of state power bodies. The classification of principles of law is touched upon, the general, inter-branch, branch and specific principles of law are distinguished. The principles of legality, democracy, humanism, justice and equality are highlighted. The principles of law are defined as the ideas expressed in legal norms, which obtain normative nature, become mandatory requirements in law enforcement practice and regulate important public relations.

ПРИНЦИПЫ ПРАВА КАК ОСНОВОПОЛАГАЮЩИЕ ИДЕИ

Г. Г. АКОПЯН
Доктор юридических наук, профессор
Р. Х. АКОПЯН
Доктор юридических наук, доцент
Ректор Гаварского государственного университета

Статья посвящена принципам права. Отмечается, что принципы права-это основополагающие идеи, которые характеризуют суть, содержание и социальное значение права. Принципы права определяются как основные ориентиры для законодательной, правоприменительной и правоохранительной деятельности органов государственной власти. Обсуждается вопрос классификации принципов права на общие, межотраслевые, отраслевые и специальные принципы. Подчёркивается важность таких общих принципов, как законность, демократия, гуманизм, справедливость, равноправие. Принципы права выражаются в правовых нормах, имеют нормативное закрепление и, как общеобязательные требования, регулируют важные общественные отношения.